

ԳՐԱԿԱՆ

ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՑ - 100

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԵՒ ԻՐ ԱՊՐԱԾ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՄԱԴՐՄԱՄԲ

(Գրիգոր Խլաթեցի - Եղիշէ Զարենց)

*Իր մատենանի այս անէ՛ Մագաղաթեայ
էջերից՝ Իր երկաթեայ անեղծ՝ իւրաքանչիւր
գրից՝ Զարհուրանգով իմանան՝ իբրեւ սերունդ
նորոգ՝ պատմութիւնը հնամեայ՝ «նախնեաց
մերոց»:*

Եղիշէ Զարենցի համեմատաբար փչյալտնի ստեղծագործութիւններից է 1937թ. գրուած եւ մեզ հասած տարբերակում «Երբ բարձրանում էր նա վեր» սկզբնատողը ունեցող պոեմը: Այս ստեղծագործութեան պահպանուած տարբերակը մեծ բանաստեղծի կեանքի վերջին տարիներին գրուած այն գործերից է, որոնց ձեռագրերը հրաշքով փրկուել եւ տպագրուել են 1938թ. լոյս տեսած «Անտիպ եւ չհաւաքուած երկեր» ակադեմիական հրատարակութեան մէջ: Հատորի ծանօթագրութիւններում նշում է, որ ստեղծագործութեան «սիւժետային գիծը եւ մանաւանդ հերոսի եղբրական վախճանը բաւական հիմքեր են տալիս ենթադրելու, թէ Զարենցի այս ստեղծագործութիւնը կոչուած էր պատկերելու ... Գրիգոր Մերենց Խլաթեցու կեանքի վերջին օրերն ու նահատակութիւնը»:

Իր կեանքի պարտադրուած մայրամուտին գրելով այս պոեմը, մեծ բանաստեղծը զարմանալի մի ընդհանրութիւն է գտել իր եւ 1425թ. նահատակուած հոգեւորական մատենագրի միջեւ:

1936 Յուլիսի 9ին Թիֆլիսում, Բերիայի ձեռնով սպանուում է ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին ֆարտուղար Աղասի Խանջեանը, որին այնուհետեւ յաջորդում են հայ մտաւորականների բանտարկութիւններն ու գնդակահարութիւնները: Լսելով Խանջեանի մահուան քօթը, Զարենցը գրում է. «Խանջեանը մեր վերջին հերոսն էր,

որին սպանեց Բերիան»: Այս շրջանում գրուած նրա մի քանի բանաստեղծութիւնները վերնագրուած են «9 844° 1936» Աղասի Խանջեանի մահուան օրը. եւ բանաստեղծի իսկ բնորոշմամբ «մի չոր բուական» կրող

*Վերնագրերն այդ անբառ, անանուն
Դարձան մահուան պէս ահեղ անհուն:*

Իսկ մի քանի օր անց գրուած «Սոնետ անկշռելի» բանաստեղծութեան համար բնարան է ընտրում Վահան Տէրեանի «Մենա՛կ պիտի դու ընդունես Գողգոթան այս նոր» տողը: Եւ խաչելութեան այս ֆանապարհին ամենաանարդար եւ վայրենի հալածանքներին ու մեղադրանքներին ենթարկուող Զարենցը ինքն իրեն հարցնում է.

*Իբրեւ Յիսու՞ս ես դու
արդեօ՞ք լեռո բարձրանում,
Թէ՞՞ - աւազակ ես դու լոկ
մահապարտ ...*

Ահա այսպէս տանջող խոհերի, հոգեւոր դաժան ինքնաքննութեան, քայց եւ միաժամանակ ստեղծագործական անդուլ որոնումների ու նոր թեմաների յայտնագործման եւ գեղարուեստական մարմնաւորման մէջ Զարենցն ապրում է իր կեանքի վերջին ամիսները»: Եւ նրա համար անօրինակ մի յայտնութեան են վերածուում հայկական վկայաբանութիւնները: Այդ յայտնութեան գեղարուեստական խորացումն ու բարձրակէտն է դառնում «Եւ բարձրանում էր նա վեր» սկզբնատողով պոեմը, որի գրական նախատիպ է ընտրում

Գրիգոր Խլաթեցուն, որովհետև միջնադարեան այս մեծ նահատակի կեանքը, գործունեությունը եւ գրական ժառանգությունը մի գարմանալի ընդհանրություն են գծում իր կեանքի այս վերջին շրջանի հետ:

Գրիգոր Խլաթեցին նախ ուսանել է Վասպուրականի Բզնունեաց գաւառի Արծկէ ֆաղափ մօտ գտնուող Ցիպնա վանքում, ապա աշակերտել Յովհան Որոտնեցուն, եղել հոգեւոր տարբեր կենտրոններում, վերստին վերադարձել Ցիպնա վանք, դեկավարել տեղի դպրոցը, կրթել բազում աշակերտներ, թողել մատենագրական եւ ձեռագրական պատկանելի ժառանգություն: Այս վանքում էլ նահատակուել է մահմեդական յելուզակների ձեռքով՝ 1425թ.: Պոեմի պահպանուած հատուածները եւ գրութեան հետ կապուած չարենցեան գրառումները վկայում են, որ նա ֆաշաժանօթ է եղել Խլաթեցու «Յիշատակարան աղէտից» չափածոյ ողբ-յիշատակարանին եւ Խլաթեցու նահատակութեանը նուիրուած վկայարանութիւնների: Վերջիններս Չարենցին գրաւել են կենսագրական, իսկ «Յիշատակարան աղէտիցը» ժամանակաշրջանի հետ ունեցած ընդհանրություններով եւ երկուսի գեղարուեստական համադրմամբ ստեղծուած պոեմում նկատի է ունեցել նաեւ իր ժամանակաշրջանը եւ իրեն: «Յիշատակարան աղէտիցում» միջնադարեան պատմական ողբերի ռոնով Խլաթեցին շարադրում է 1386-1422թթ. դէպքերն ու իրադարձությունները: Աղէտները սկսում են թուագրուած առաջին իսկ տարուց, երբ տեղի է ունենում արեւի խաւարում, եւ անժամանակ վախճանում է Խլաթեցու ուսուցիչը՝ մեր եկեղեցու եռամեծար վարդապետ Յովհան Որոտնեցին:

Որեւէ տարեթիւ բուն հայկական թուականով նշանակելու համար նրանից պէտք է հանել 551: Իսկ 1937ից եթէ

հանենք 551, ապա կը ստացուի 1386, մի թուական, որով սկսուեցին Խլաթեցու յիշատակած աղէտները: Թուային գարմանալի այս գուգադիպությունը ցնցել է Չարենցին եւ նա կատարել է հետեւեալ գրառումը. $81937 - 1386 = 551$, $1386 + 551 = 1937$ թիվ»: Այս նոյն 1386 թուականը յիշատակելիս Թովմա Մեծոփեցին էլ նախ շեշտում է հոգեւոր խաւարումը՝ Որոտնեցու մահը, ապա նոր՝ Արեգակինը: Չարենցի համար նման հոգեւոր խաւարումը՝ սկսուեց Խանջեանի սպանութեամբ եւ առաւել բարձրացաւ իր գրչընկերների բանտարկութիւններով: Խլաթեցու նահատակութեանը նուիրուած ողբում հոգեւոր նման խաւարում է անուանում Խլաթեցու սպանութիւնը.

Խաւարեցաւ լոյսն արփենի

Ջահրն շիջաւ Նոր Սիովնի:

Պոեմի զարգացման ընթացքը վկայում է, որ Չարենցը եւս այսպիսի մի խաւարում է համարում իր հերոսի մահը, որում յանձին Խլաթեցու, նկատի է ունեցել հենց իրեն, որի հաւաստումն են բաւականին թափանցիկ կերպով իրեն ակնարկող հետեւեալ տողերը.

Կարծես մեռեալ է անմահ

Նայիրական քոյով ...

Խլաթեցու վարժագիրը նրա նահատակութիւնը ոչ թէ կորուստ է համարում իր՝ Խլաթեցու, այլ նրա ժամանակակիցների համար. «Ոչ թէ հեռացաւ նա ի դառն ծովու աշխարհիս, այլ զի մեք հեռացաք ի նորա ֆաղցր եւ վայելուչ տեսութեանցն», եւ թէ նրա նահատակութեամբ «խաւար տարածեցաւ ի վերայ Հայաստանեայց, զի սուգ անմխիթար մեզ պատահեաց»: Նոյն կերպ՝ միայնակ մնացած եւ ամէն բոպէ իր ետեւից եկողներին սպասող Չարենցն ակնկալուող իր մօտալուտ մահը հարազատ ժողովրդի համար էր կորուստ համարում, եւ այս միտքը ողբերգական մի ցայտունու-

թեամբ է արտայայտուել յատկապէս «Իմ մահուան օրը կ'իջնի լոռութիւն» բանաստեղծութեան մէջ.

*Իմ մահուան օրը կ'իջնի լոռութիւն,
Ծանր կը նստի ֆաղափի վրայ,
Ինչպէս ամպ մթին կամ հին տրտմութիւն,*

Կամ լուր աղէտի թերթերում գրուած:

Թէ՛ այս եւ թէ՛ յաջորդ տողերում գերիշխում են մթի ու աղէտի հետ կապուած բառերը՝ լեզու-ոնական մի ընդհանրութիւն ուրուագծելով «Յիշատակարան աղէտից»ի հետ:

Խլաթեցին իմանալով, որ Արծկէ ֆաղափի վրայ համարձակուողների մի խումբ գաղտագողի գալիս է աւերելու նաեւ Ցիպնա վանքը, փրկուելու համար չի փախչում, այլ մնում եւ գիտակցաբար նահատակում է: Այսպէս եւ Չարենցը փրկուելու համար իր համոզմունքներից հրաժարուելու որեւէ փորձ չարեց եւ գիտակցաբար ընդառաջ գնաց մահուանը:

«Երբ քարձրանում էր նա վեր» պոեմում Խլաթեցու մասին եղած մատենագրական վկայութիւնները խտացրել եւ գեղարուեստական վերաիմաստաւորմամբ մեծ բանաստեղծը ներկայացրել է մէկ դրուագում լեռն ի վեր ելնելով՝ եկեղեցու բաց դռնից ներս է մտնում եւ այնտեղ իր կիսաւարտ մատենի գրութիւնը շարունակում: Ծերունին (Խլաթեցին) հասնում է վանքի մօտ, դռան դիմաց կանգ առնում եւ պատրաստում ներս մտնելու մահուանն ընդառաջ գնալով.

Կանգնած մուտքից դեռ հեռու, -

Չկամելով կարծես

Դեռ հարազատ բիթերում

Տեսնել մահուան ֆերձեր, -

Չկամելով դեռ բանալ

Կարծես՝ երկար-երկար

Տարիներով երազեալ

Դուռ մի՛ նիզով երկար ...

Խլաթեցու վարժում ասում է, որ նա

ոչ միայն առափնի, ուսումնասէր եւ նգնակեաց կեանքով էր ապրում, այլեւ խմբագրելով եւ լրացնելով «Յայսմաւորքը» նոր նահատակների կենսագրութեամբ «ի վերայ այս ամենայնի առափնութեան՝ ցանկայր մարտիրոսութեան հասանել եւ վկայիցն պսակացն ժամանել»: Եւ պոեմում «Տարիներով երազեալ» խօսքերով Չարենցը ակնարկում է նահատակուելու նրա հենց այս ձգտումը, որը տարբերակներից մէկում առաւել յստակօրէն է արտայայտուած.

Չի կամենում դեռ բանալ

... Արքայութեան երկնային

Դուռն՝ անհասելի՛

Դուռն՝ ամենայն իր

Խոկմանց երազների ...

Խլաթեցին իր աղէտների յիշատակարանում ասպատակողների դաժանութիւնների տարբեր օրինակներ է բերում, որոնք հոգեւոր զարմանալի մի նոր վերաիմաստաւորման է ենթարկում Չարենցը: Այսպէս, Խլաթեցին գրում է, թէ կենդանի մարդկանց բռնելով

... հրով խորովէին

եւ նենկերովքն ցնծային:

Այս տողերը անզօր տառապեալների կրած չարչարանքներից հոգեւոր ինքնագոհաբերումի աստիճանի է քարձրացնում բանաստեղծը.

Իր հաւատի նենկով

Խնկելով զոհ յանցապարտ ...

Խլաթեցին ասում է, որ այս աղէտներից փրկուածները մարդկային-բարոյական տարբեր ձեւախեղումների ենթարկուեցին, նոյն կերպ է գրում նաեւ Չարենցը. ակնարկելով 1936-37թթ. բռնութիւնների ժամանակի բարոյական անկումը, մէկմէկու դաւելը եւ այլն:

Խլաթեցի.

Աւտարացան եւ յոռացան

Չհայրենիսն մոռացան,

Պղծեցան եւ գարշեցան

Աղտեղացան եւ զազրեցան ...

Զարեհնց.

Իրրեւ գազան ամեհի, -

Կերանք իրար միս, -

Կորցրինք դէմք մարդկային,

Հոգի ու մարմին ...

Յատկանշական է, որ Խլաթեցին աղէտների յիշատակարանը գրել է նահատակութիւնից երկու տարի առաջ եւ այն աւարտել է Սուրբ Երրորդութեանն ուղղուած գոհաբանական մաղթանքով.

Որ ապրեցաք ի յայս վշտիս,

Զմեզ ոչ բողբալ ի նեղութիւն,

Այլ փոյթ եհան

Յանդորրութիւն ...

Իր մահից ոչ շատ առաջ հայ դպրութեան եւ մշակոյթի անանց ու անեղ- ծանելի լինելու նոյն լաւատեսութեամբ է նորօրեայ աղէտների ճնշող տպաւորութեան ներքոյ այս պոեմը գրում Եղիշէ Զարեհնցը, գալիքի հանդէպ ունեցած հաւատը լաւագոյնս արտայայտելով Ա. Խանջեանի յիշատակին նուիրուած բանաստեղծութեան հետեւեալ տողերում.

Իմաստուն է միայն

Քառուղիներ հարթող

Վաղուայ յաջորդը քո այն երջանիկ.-

*Որ պիտի գայ, գիտեմ - եւ անիւնի հետ
քո*

Մեր յաղթութեան լեզբնդը

Մահուան նաշից հանի ...

ՏԻԳՐԱՆ ԴԵԻՐԻԿԵԱՆ